գիւտին, թէև չենք կարող մոռնալ, որ Ե. դարի վերջերում կամ Զ. դարի սկզբներում տեղի ունեցած չլինի Ս. Լուսաւորչի մասունքների մի յայտնութիւն Հայաստանի յունական բաժնում: այլ կերպ դժուար է բացատրել այն աւանդութիւնը, որ գոյութիւն ունի մեր յիշատակարաններում իբր թէ Ս. Լուսաւորչի նշխարները Զենոն կայսեր հրամանով բռնութեամբ տարուեցան Բիւզանդիա, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն: Նրմանապէս անբացատրելի կըմնան այն աւանդութիւնները, որոնցից երևումէ, թէ Բիւզանդիայից բերուած են Հայաստան Ս. Լուսաւորչի նշխարներն Թ. դարում Աշոտ Ա. Թագաւորի ժամանակ, * Այնուամենայնիւ մեզ համար հաւաստին այն է, որ Ե. դարում կային Վաղարշապատում և ապա Դուինում Ս. Լուսաւորչի նշխարներ, թէ ինչպէս էին նոքա բերուել այնտեղ, յայտնի չէ. գիտենք միայն, որ Է. դարում տեղի է ունենում Ս. Լուսաւորչի նշխարների մեծագոյն մասի փոխադրութիւնը Թորդանից Այրարատ Գրիգոր պատրիկ Մամիկոնեանի ձեռքով: Այդ պատմում է Մովսէս Կաղանկատուացին. «Ի ժամանակսն յայնոսիկ, ասումէ նա, բերեալ էր իշխանն և մեծ զօրավարն Հայոց ի Թորդանայ ի Դարանաղեաց գաւառէն զպատուական նշխարս սրբոյն

* Կիրակոս Գանձ. 8: